«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Միջառարկայական կապերի կիրառման ազդեցությունը սովորողների մետաճանաչողության վրա:

ՀՀ Արմավիրի մարզ գ.Ակնալիճ Ա. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց

Վերապատրաստվող ուսուցիչ՝ Անուշիկ Դանիելյան

Մենթոր ուսուցիչ՝ Ռուզաննա Աղաջանյան

Արմավիր 2022

Բովանդակություն

Ներածություն----------2 էջ

Գրական ակնարկ----------3 էջ

Միջառարկայական կապերը որպես մանկավարժական հիմնախնդիր----------4 էջ

Եզրակացություն----------15 էջ

Գրականության ցանկ----------16 էջ

Գիտելիքը գանձ է ,բայց նրա բանալին պրակտիկան է.

Վովենարգ

Ներածություն

Մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը: Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»: Տեղեկատվական հաղորդակման տեխնոլոգիաների և օտար լեզուների դասաժամերին ուսուցումը պետք է կազմակերպել այնպես, որ կատարելագործվեն սովորողների լեզվամտածողության ունակությունները ի նպաստ ստեղծագործական և քննադատական մտածողության: ՏՀՏ -ների և օտար լեզուների դասաժամերի մեծ մասը պետք է կազմակերպել մյուս առարկաների հետ օրգանական կապի մեջ, որը հնարավորություն կտա զարգացնելու սովորողների տարբեր կարողունակության որակներ:

Միջառարկայական կապերն ազդում են ուսումնական առարկաների բովանդակության և կառուցվածքի վրա: Յուրաքանչյուր ուսումնական առարկա հարակից առարկաների համար միջառարկայական այս կամ այն տեսակի կապերի աղբյուր է: «Միջառարկայական կապերը կարելի է դիտարկել որպես

առարկայական ուսուցման համակարգի անհրաժեշտ տարր, քանի որ առարկաները և նրանց հարաբերությունները չեն կարող հակադրվել միմյանց:

Միջառարկայական կապերը որպես մանկավարժական հիմնախնդիր

Վերջին տարիներին մեր երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոփոխությունները հանգեցրել են կրթական համակարգի արմատական նորացման անհրաժեշտության: Աշխարհում տեղի ունեցող արագ փոփոխությունների ֆոնին Հայաստանի Հանրապետության զարգացման ներկա փուլում կրթության արդիականացումը դառնում է հասարակության տնտեսական և սոցիալական առաջընթացի անհրաժեշտ գործոններից մեկը: Կրթական քաղաքականության գլխավոր խնդիրը հասարակության և պետության ժամանակակից պահանջներին համապատասխան կրթության որակի ապահովումն է: Կրթության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումները չեն կարող չազդել կրթական գործընթացի վրա, որին ներկայացվող պահանջներից են ստացած գիտելիքի գիտակցվածությունն ու կիրառելիությունը: Ժամանակակից հանրակրթական դպրոցի հիմնական խնդիրը համընդհանուր գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների և արժեքների ամբողջական համակարգի ձևավորումն է դպրոցականի, շրջանավարտի, ավագ դպրոցականի մոտ, ինչը հնարավոր չէ իրականացնել ուսուցման գործընթացում առանց միջառարկայական կապերի հաստատման: Հասարակությունը մարդու նկատմամբ առաջ է քաշում և ներկայացնում շատ նոր պահանջներ, առաջին հերթին մշտական ինքնակրթության, մտավոր զարգացման, մտածելու և ստեղծագործելու ունակության պահանջ, համեմատելու, քննադատաբար խնդրին մոտենալու, վերլուծելու, արժևորելու կարողություններ: «Այս հատկանիշներից շատերը կարելի է զարգացնել դպրոցներում ավելացնելով տարբեր հիմնարար առարկաների միջառարկայական, ներառարկայական ու վերառարկայական կապերը, ներդնելով ինտեգրված դասեր, օգտագործելով համակարգչային տեխնոլոգիաներ, առաջնային դարձնելով մանկավարժի ցանկությունը երեխային սովորեցնել աշխարհը տեսնել ամբողջական, այլ ոչ թե առանձին տեղեկությունների և պատկերացումների մասնատված, որոնք միմյանց հետ չմիավորվելով, ժամանակի ընթացքում հեշտությամբ մոռացվում են և չեն նպաստում շրջակա իրականության իրական պատկերը ստեղծելու կարևոր գործին: Անհրաժեշտ է փնտրել նորարարական միջոցներ և ուսուցման մեթոդներ: Ավագ դպրոցականի կրթության որակի, ուսումնառության մակարդակի

բարելավման եղանակների որոնումը նպատակահարմար է իրականացնել ինտեգրված միջառարկայական կապերի զարգացման ոլորտում»:

Ժամանակակից կյանքի պայմաններում ուսուցիչը կրթական գործընթացում ստացել է ստեղծագործական լայն հնարավորություններ, մեթոդների, ուսուցման հնարների ակտիվ որոնման ազատություն: Կրթության բարեփոխումների առաջնային խնդիրներից մեկը սովորողների իմացական ակտիվության ու շահագրգռվածության բարձր մակարդակի ապահովումն է: Տարբեր գիտություններ միևնույն օբյեկտը տարբեր տեսանկյուններից դիտարկելու ընդհանուր եզրեր ունեն: Միջառարկայական կապերի հաստատման նպատակն է ուսուցման գործընթացը կազմակերպել այնպես, որ այն նպաստի բնության օրենքների մասին սովորողների գիտական պատկերացումներն ամբողջական համակարգի մեջ տեսնելու կարողությունների ձևավորմանը: Միջառարկայական կապերը հնարավորություն են տալիս ստեղծել միասնական, ինտեգրված դասեր, որոնց ժամանակ երեխաներն աշխատում են հեշտությամբ և հետաքրքրությամբ՝ արդյունքում յուրացնելով մեծ ծավալով օգտակար նյութեր, ձեռք բերելով գիտակցված գիտելիքներ և ձևավորելով համադրելու, ընդհանրացնելու կարողություններ: Կարևոր է նաև այն, որ ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները կիրառվում են դպրոցականների կողմից իրենց գործունեության մեջ ոչ միայն ստանդարտ ուսումնական իրավիճակներում, այլև անծանոթ իրավիճակում ստեղծագործական դրսևորումների, գործնական գիտելիքի, մտավոր ունակությունների դրսևորման ժամանակ: Դպրոցական պրակտիկայից հայտնի է, որ այն հարցերը, որոնք պահանջում են անսովոր կողմից որևէ բան դիտարկել, հաճախ երեխաներին փակուղու մեջ են դնում, և դա հասկանալի է, քանի որ նրանց դա չեն սովորեցրել: Իհարկե, ինչ-որ բան նորովի տեսնելը, և ոչ այնպես, ինչպես նախկինում տեսել ես, հեշտ խնդիր չէ: Բայց դա կարելի է սովորել այն դեպքում, երբ ուսուցման գործընթացը կազմակերպվում է սովորողների ինքնուրույն գործունեությունը, ստեղծագործական ունակությունները խթանելու, զարգացնելու բազմատեսակ հնարավորություններ ստեղծելու միջոցով:

Ավագ դպրոցականների ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի հաստատման համակարգված մոտեցման ներդրումը կարող է ավելի մեծ չափով, քան ավանդական առարկայական ուսուցումը, նպաստել լայն խորագիտակ մարդու զարգացմանը, որն ունի ամբողջական աշխարհայացք, իր ունեցած գիտելիքներն ինքնուրույն համակարգելու ունակություն և տարբեր

խնդիրների լուծման համար կարող է ցուցաբերել ոչ ավանդական մոտեցում: Ուսուցման այս մեթոդը գրավիչ է նաև ուսուցիչների համար, օգնում է նրանց ավելի լիարժեք գնահատել ավագ դպրոցականի ունակություններն ու գիտելիքները, հասկանալ նրան, դրդում է փնտրել ուսուցման նոր, ոչ ավանդական ձևեր և մեթոդներ: Սա մեծ տարածք է ուսուցիչների, մեթոդիստների, հոգեբանների և բոլոր նրանց ստեղծագործական ունակությունների դրսևորման համար, ովքեր ցանկանում են և կարողանում են աշխատել, ովքեր կարող են հասկանալ ժամանակակից երեխաներին, հաշվի առնել նրանց պահանջներն ու շահերը: Մարդու մտածողության մեջ շրջակա աշխարհի վերաբերյալ գիտելիքները ոչ թե պարզապես արտացոլվում են, ինչպես շրջապատող աշխարհը ջրի փոքրիկ կաթիլում, այլ դրանք մեծ մասամբ ձևավորում են մարդու վերաբերմունքը բնության, աշխարհի, կյանքի նկատմամբ, ազդում նրա բարոյական կերպարի վրա, հատկապես դեռահասային, ավագ դպրոցական տարիքում: Ուսուցման գործընթացում ոչ միայն բնության մասին գիտելիքներն են կարևոր, այլև նրա գաղտնիքների մեջ խորը ներթափանցումը, որը հանգեցնում է գիտության հմայքի բացահայտմանը, ծագում է ակնածանք դրա հանդեպ: Ահա թե ինչն ունի դաստիարակչական ուժ, ինչը կարող է օգնել սովորողին սիրել գաղափարները և ճշմարտությունը, հոգևոր արժանիքները բարձր դասել պատահական առավելություններից:

Միջառարկայական կապերը կարող են օգնել աշակերտներին հասկանալ շրջապատող աշխարհը, նրա հատկությունները, հիմնական երևույթները, այնտեղ ընթացող գործընթացները և այն օրինաչափությունները, որոնց դրանք ենթարկվում են: Այսպիսով, դպրոցական առարկաների փոխադարձ կապակցվածությունը սովորողներին համոզում է, որ գիտելիքների տարբեր ճյուղերի միջև չկան կտրուկ սահմաններ, որ գիտության տարբեր ոլորտները միմյանցից կտրված չեն, այլ փոխադարձաբար կապված են միմյանց հետ: Սովորողները գիտակցում են իր բովանդակությամբ այն խորը փաստը, որ բոլոր գիտություններն իրականում տարբեր կողմերից և յուրաքանչյուրն իր մեթոդներով ուսումնասիրում է նյութական աշխարհը: Իրենց ամբողջության մեջ նրանք ընդհանուր պատկերացում են տալիս բնության մասին: Այս ամենը կարևոր դաստիարակչական նշանակություն ունի:

Ժամանակակից պայմաններում անհրաժեշտություն է առաջանում սովորող-ների մոտ ձևավորել ոչ թե մասնավոր, այլ ընդհանրացված ունակություններ, որոնք լայն ոլորտներում ունեն գիտելիքը տեղափոխելու հատկություն: Նման

ունակութ- յունները, որոնք ձևավորվել են որևէ առարկայի ուսումնասիրության ընթացքում, այնուհետև սովորողների կողմից ազատորեն օգտագործվում են այլ առարկաների ուսումնասիրության և գիտելիքի գործնական կիրառության մեջ: Մանկավարժական գրականության մեջ առկա են «միջառարկայական կապեր» հասկացության ավելի քան երեսուն սահմանումներ, ինչպես նաև երևույթի մանկավարժական արժեքի գնահատականի և տարբեր դասակարգումների վերաբերյալ տարբեր մոտեցումներ: Առավել ամբողջական սահմանումներից մեկն այն է, որ միջառարկայական կապերը օբյեկտների, երևույթների և իրական գործընթացների միջև սինթեզը, ինտեգրատիվ հարաբերությունները ցույց տալու համար կրթական կատեգորիաներ են, որոնք արտացոլվում են ուսումնադաստիարակչական գործընթացի բովանդակության, ձևերի և մեթոդների մեջ ու իրենց որոշակի հստակ միասնության մեջ կատարում են կրթական, զարգացնող և դաստիարակչական գործառույթներ:

Ինտեգրման գործընթացում տեղի է ունենում գիտությունների միջև կապերի մերձեցում: Ներկայումս առանձին, միմյանցից անկախ դասավանդվող ուսումնական առարկաների ինտեգրումը թույլ կտա ուսուցման շեշտադրումները գիտելիքների պարզ կուտակումից տեղափոխել իրական կյանքում հանդիպող իրավիճակներում և մասնավորապես այլ ուսումնական առարկաների ոլորտում, իրենց գիտելիքներն, ընդհանուր առմամբ, կիրառելու ունակությունների զարգացման վրա: Ավանդաբար ինտեգրումն իրականացնելու առավել մատչելի միջոցներից մեկը ինտեգրված դասերի անցկացումն է:

Սոցիալական զարգացման իրավիճակն առաջին հերթին բնութագրվում է նրանով, որ ավագ դպրոցականը կանգնած է անկախ կյանքի շեմին: Նա պետք է դուրս գա աշխատանքային գործունեության ճանապարհ և որոշի իր տեղը կյանքում: Ավագ դպրոցականի առաջ կանգնած է ինքնորոշման, կյանքի ուղու ընտրության խնդիրը: Մասնագիտության ընտրությունը դառնում է զարգացման իրավիճակի հոգեբանական կենտրոն՝ նրա մոտ ստեղծելով յուրօրինակ ներքին դիրքորոշում: Դրա հետ կապված վաղ երիտասարդության շրջանում առաջատար գործունեությունը մասնագիտական ինքնորոշումն է (ուսումնա-մասնագիտական): Վաղ պատանեկության տարիքում ինքնորոշման հոգեբանական բազան նախ և առաջ կազմում է չափահաս մարդու ներքին դիրքորոշում գրավելու պահանջմունքը, իրեն որպես հասարակության անդամ ճանաչելու, աշխարհում իր տեղը որոշելու անհրաժեշտությունը, այսինքն՝ կյանքում իր տեղն ու նշանակությունն ըմբռնելու հետ մեկտեղ, հասկանալ ինքն իրեն և իր

հնարավորությունները: Գործունեության ապագա ոլորտի ընտրությունն ինքնորոշման գործընթացի բուն կորիզն է:

Ապագայի հետ կապված շարժառիթները սկսում են ավագ դպրոցականին դրդել ուսումնական գործունեության: Ուսումնական առարկաների նկատմամբ դրսևորվում է մեծ ընտրողականություն: Ճանաչողական գործունեության հիմնական շարժառիթը մասնագիտություն ձեռք բերելու ձգտումն է: Նոր սոցիալական դիրքորոշումն ավագ դպրոցականների համար կտրուկ փոխում է ուսուցման նշանակությունը: Նրանք ուսումնական գործընթացը սկսում են գնահատել այն առումով, թե ինչ է տալիս այն իրենց ապագայի համար: Ավագ դպրոցականի ուսումնական գործունեությունն ավելի բարձր պահանջներ է ներկայացնում նրա մտավոր ակտիվության և ինքնուրույնության նկատմամբ: Ծրագրային նյութի յուրացման համար անհրաժեշտ է ընդհանրացնող հասկացությունների, եզրույթների, գաղափարների վերլուծության միջոցով մտածողության զարգացման բարձր մակարդակ: Ուսումնառության դժվարությունները կապված են ոչ թե սովորելու ցանկության, այլ նոր պայմաններում սովորելու անկարողության հետ: Սովորողները մեծանում են, հարստանում իրենց փորձով. նրանք գիտակցում են, որ կանգնած են ինքնուրույն կյանքի շեմին: Աճում է նրանց գիտակցված վերաբերմունքն ուսման նկատմամբ: Ուսուցումը դառնում է կյանքի անմիջական իմաստ: Ուսումնական առարկաների նկատմամբ վերաբերմունքն ընտրողական բնույթ է կրում:

Ճանաչողական հետաքրքրությունների զարգացումը խթանում է ճանաչողական գործընթացների հետագա կամայական զարգացումը, դրանք կառավարելու, գիտակ- ցաբար կարգավորելու ունակությունը: Ավագ դպրոցական տարիքի վերջում աշակերտները իրենց հիշողությունը, ընկալումը, երևակայությունը, ուշադրությունը և իրենց էներգիան, ուժերը, ամբողջ ներուժն ուղղում են գործունեության որոշակի խնդիրների հաղթահարմանը: Ուսումնական գործունեության յուրահատուկ կազմա- կերպման ազդեցությամբ էապես փոխվում է ավագ դպրոցականների ուսումնական գործունեությունը, նրանց մտավոր աշխատանքի բնույթը: Ավագ դպրոցականների մտավոր գործունեությունը համեմատած դեռահասային տարիքում նրանց մտավոր գործունեության հետ բնութագրվում է.

- ընդհանրացման և վերացարկման, աբստրահման կարողությունների ավելի բարձր մակարդակով;

- երևույթների պատճառները բացատրելու աճող միտումներով,
- դատողությունները հիմնավորելու, առանձին դրույթների կեղծությունը կամ ճշմարտացիությունն ապացուցելու ունակություններով,
- խորը եզրակացություններ և ընդհանրացումներ կատարելու ունակությամբ,
- սովորածը համակարգելու, ամբողջացնելու կարողություններով:

Այսպիսով, տարիների հետ զարգանում է սովորողի, ավագ դպրոցականի, երիտասարդի քննադատական մտածողությունը: Այս ամենը նպաստում է տեսական մտածողության ձևավորմանը, շրջապատող աշխարհի, բնության օրենքների և հասա- րակության զարգացման ընդհանուր օրինաչափությունները հասկանալու ունակութ- յունների կատարելագործանը: Ինչպես ցույց է տալիս փորձը, դպրոցական դասըն- թացում միջառարկայական կապերի հաստատումը նպաստում է սովորողների աշխարհի մասին համալիր պատկերացումների ու պատկերի ամբողջացմանը և նախնական իմաստով գիտության և հասարակության ինտեգրացիոն գործընթացների կոնկրետ արտահայտությունն է: Միջառարկայական կապերը կարևոր դեր են խաղում սովորողների գիտական աշխարհայացքի ու գործնական մոտեցումների ձևավորման համար ու նպաստում են նրանց հետաքրքրվածությունը մեծացնելու, ճանաչողական բազմաբնույթ գործունեության մեջ ընդգրկելու, գիտելիքներն ընդհան- րացնելու կարևոր գործին: Աշխարհի մասին ընդհանրական պատկերը ավագ դպրոցականին հնարավորություն է տալիս կիրառել գիտելիքները և հմտությունները կոնկրետ իրավիճակներում, երբ քննարկվում են ինչպես ուսումնական, այնպես էլ արտաուսումնական գործունեության, հետագայում նաև արտադրական, գիտական և հասարակական կյանքի մասնավոր հարցեր: Միջառարկայական կապերի լայն, բազմակողմանի օգտագործման արդյունքում ոչ միայն որակապես նոր մակարդակի վրա են լուծվում սովորողների, հատկապես ավագ դպրոցականների ուսուցման, զարգացման և դաստիարակության խնդիրները, այլև նրանց մոտ կոնկրետ իրակա- նության բարդ խնդիրները համալիր տեսնելու, իրական լուծումներ և մոտեցում գտնելու հիմքն է դրվում:

Միջառարկայական կապերը գիտությունների համակարգով և դիդակտիկ նպատակներով պայմանավորված կրթական ծրագրերի փոխադարձ համաձայնեց- վածությունն են: Միջառարկայական կապերն արտացոլում են դաստիարակության և ուսուցման համալիր մոտեցումը, թույլ են տալիս առանձնացնել ինչպես

կրթության բովանդակության հիմնական տարրերը, այնպես էլ առարկաների միջև փոխադարձ կապերը: Միջառարկայական կապերը սովորողների մոտ ձևավորում են հատուկ գիտելիքներ, բացահայտում են իմացության տեսության խնդիրները, առանց որոնց անհնար է գիտությունների հիմքերի համակարգային յուրացումը: Միջառարկայական կապերը սովորողներին ներառում են գիտական ճանաչության ընդհանուր մեթոդների՝ աբստրահում, մոդելավորում, համեմատում, ընդհանրացում և այլն, գործառնությունների, կիրառման մեջ: «Ուսուցման մեջ միջառարկայական կապերը դաստիարակության և ուսուցման նկատմամբ արտացոլում են համալիր մոտեցում, թույլ են տալիս ինչպես մասնատել ուսումնական առարկաների կրթության բովանդակությունը և հիմնական տարրերը, այնպես էլ դրանց միջև հաստատել փոխադարձ կապեր: Միջառարկայական կապերի անհրաժեշտությունը պայմանավորված է իրական աշխարհի միասնությունն արտացոլող գիտական գիտելիքների և համոզմունքների ձևավորման գործոններով: Ժամանակակից տեղեկատվական հասարակության մեջ օրեցօր աճում է տեղեկատվության որոնման, վերլուծության, մշակման, պահպանման, տարածման, ուրիշներին հնարավորինս ռացիոնալ եղանակով ներկայացնելու հմտությունների ձևավորման անհրաժեշտությունը, այսինքն, հատկապես արդիական է դառնում տեղեկատվության հետ աշխատելու աշակերտների մշակույթի դաստիարակության խնդիրը: Բացի այդ, տեղեկատվության հետ աշխատանքը միավորում է սովորողի ճանաչողական շահերը և դպրոցական կրթության գործընթացի էությունը: Այսպիսով, միջառարկայական ինտեգրման հաճախ կիրառվող տարբերակներից մեկը կարող է դառնալ ՏՀՏ-ի, ինֆորմատիկայի ինտեգրումն այլ ուսումնական առարկաների հետ, որը գրեթե բոլոր ուսումնական առարկաների համար կարող է ծառայել որպես կապող օղակ: Այն կլինի դպրոցական կրթության հնարավորությունների ընդլայն- ման, մանկավարժի մեթոդական հարստացման և ուսուցման որակի բարձրացման միջոց: Բայց ինտեգրման հիմնական նպատակը դպրոցականի մոտ շրջապատող աշխարհի մասին ամբողջական պատկերացում ստեղծելն է, այսինքն՝ սովորողի աշխարհայացքի ձևավորումը:

Բազմակողմանի միջառարկայական կապերի միջոցով ոչ միայն որակապես նոր մակարդակում լուծվում են սովորողների ուսուցման, զարգացման և դաստիա- րակության խնդիրները, այլև հիմք է դրվում իրական բարդ խնդիրների լուծման համապարփակ տեսլականի և մոտեցման համար: Դա է պատճառը, որ

միջառարկայական կապերը ուսուցման և դաստիարակության համապարփակ մոտեցման համար կարևոր պայման և արդյունք է:

Հումանիտար ուղղվածությամբ ավագ դպրոցականների մոտ տարբեր լեզուների դասերի ժամանակ միջառարկայական կապերն արտահայտվում են խոսքի զարգաց- ման համար այս կամ այն առարկայի միջառարկայական նյութի օգտագործման, գրական ամենօրյա լեզվի և գիտության լեզվի ընդհանրությունները բացահայտելու համար: Խոսքը հարստացնում են պատկերներով, ցույց են տալիս բանաստեղծական խոսքի և երաժշտական հնչողության ընդհանրությունը և այլն: Սովորաբար ասում են, որ լեզուն կապված է դպրոցական բոլոր առարկաների հետ, «քանի որ լեզուն բոլոր առարկաների համար արտահայտվելու, հաղորդակցվելու, գիտելիքը փոխանցելու անհրաժեշտ միջոց է»: Նման կապի առկայությունն անվիճելի է: «Հայոց լեզու - ուսումնական առարկաներ» շղթայում այս կապը սահմանվում է ոչ այնքան հայոց լեզվի, որքան մյուս բոլոր առարկաների համար, քանի որ լեզուն, որպես գիտելիքների գործիք, ցանկացած առարկայի վերաբերյալ սովորողների գիտելիքների յուրացման վճռորոշ պայմաններից մեկն է: Միջառարկայականությունը ուսուցման ժամանակա- կից սկզբունքն է, որն ազդում է մի շարք առարկաների ուսումնական նյութի ընտ- րության և կառուցվածքի վրա, ուժեղացնելով ավագ դպրոցականների գիտելիքների համակարգվածությունը, ակտիվացնելով ուսուցման մեթոդները, կենտրոնանում է ուսուցման կազմակերպման համալիր ձևերի կիրառման վրա, ապահովելով ուսումնադաստիարակչական գործընթացի միասնությունը: Ավագ դպրոցում մայրենի և օտար լեզուների դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու համար այլ մեթոդական հարցերի հետ մեկտեղ զգալի դեր է հատկացվում նաև միջառարկա- յական կապերին: Միջառարկայական հիմունքներով լեզվի դասերը թույլ են տալիս լուծել հետևյալ խնդիրները.

- միավորել ավագ դպրոցում սովորող առարկաները՝ օգտագործելով ուսում- նական առարկաների միջև փոխհարաբերությունները, որոնք հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմել ուսումնասիրվող երևույթների, գործողությունների, գործընթացների մասին;
- սովորողներին զինել ճիշտ ուղղագրությամբ գրելու, բանավոր և գրավոր կապակցված խոսք կառուցելու հմտություններով;
- ուսումնական գործունեության տեսակների կանոնավոր ռացիոնալ հերթափոխման հաշվին ավագ դպրոցականների համար ստեղծել

պայմաններ սթրեսներից խուսափելու, հոգեկան առողջության պահպանման համար;

- զարգացնել արդյունավետ հաղորդակցման, կենսական փորձ ձեռք բերելու հմտությունները, ընդլայնել անձի սոցիալական տարածքը:

Միջառարկայական կապերը նպաստում են սովորողների ստեղծագործական, տրամաբանական և փոխաբերական մտածողության զարգացմանը, թույլ են տալիս նրանց կիրառել ստացած գիտելիքները իրական պայմաններում, հանդիսանում են անձնային հատկանիշների և ներքին մշակույթի դաստիարակության կարևոր գործոններից մեկը, որոնք ուղղված են բնության, մարդկանց, աշխատանքի և կյանքի հանդեպ բարի վերաբերմունքին: Ավագ դպրոցականների մեծամասնությունը ամբողջական, միասնական, բազմազան աշխարհի մասին ունեն մասնատված, հատվածական տեղեկություններ: Բովանդակությամբ մոտ ուսումնական առարկա- ների դասավանդման մասնատվածությունը, մեկուսացումը հանգեցնում է այն բանին, որ միանգամայն գրագետ լեզվով գրված աշակերտի շարադրությունը աշխարհի հետ ծանոթանալու ստեղծագործական աշխատանքի ընթացքի մեջ բազմաթիվ կոպիտ ճանաչողական սխալներ ունի: Այսպիսով, ավագ դպրոցականների լեզուների դասերի ընթացքում ուսուցման գիտական տեքստերի, գրական ընթերցանության ստեղծա- գործությունների, նկարների, դասագրքերի նկարազարդումների օգտագործման, երաժշտական ուղեկցության շնորհիվ ստեղծագործական մթնոլորտի ստեղծումը թույլ է տալիս ստեղծել հետաքրքիր, արդյունավետ, կառուցողական իրավիճակ և խուսափել լեզվական, բանավոր և գրավոր խոսքի զարգացման վարժությունների ձևական կատարումից:

Սովորողների մոտ զարգացնելով խոսքային իրավիճակի բովանդակությունն ու ձևը հարաբերակցելու ունակություն, միջառարկայական բառապաշարի հիման վրա կատարվող վարժությունները դաստիարակում են մտածողությունը, սրում մայրենի և օտար լեզվի զգացողությունը, սովորեցնում են ճկուն օգտագործել դրանք՝ ընտրելով մի քանի խոսքային տարբերակներից մեկը, որն առավել հարմար է իրավիճակը ճիշտ ու ամբողջական ներկայացնելու պահանջին: Միջառարկայական կապերի իրականացումը պահանջում է ուսուցիչների կողմից ուսումնական և արտադասարանական աշխատանքների համալիր ձևերի համատեղ պլանավորում, լրացուցիչ ուսումնական աշխատանք, ինչը ենթադրում է նրանց կողմից հարակից առարկաների ծրագրերի և դասագրքերի իմացություն:

Այսպիսով, միջառարկայականությունը ուսուցման ժամանակակից սկզբունք է, որն ազդում է մի շարք առարկաների ուսումնական նյութի ընտրության և կառուցվածքի վրա, ուժեղացնում է ավագ դպրոցականների գիտելիքների համակարգվածությունը, ակտիվացնում է ուսուցման մեթոդները, կենտրոնանում է ուսուցման կազմակերպման համալիր ձևերի կիրառման վրա, ապահովելով ուսումնադաստիարակչական գործընթացի միասնությունը: Միջառարկայական կապերն իրական կապեր են, որոնք արտացոլում են աշխարհի օբյեկտիվ իրականությունը, հետևաբար, պայմանավորում են ուսուցման բովանդակությունը, մեթոդներն ու ձևերը: Բովանդակության, մեթոդներն ու ձևերի միջոցով էլ բացահայտվեցին միջառարկայական կապերի հիմնական դիդակտիկ գործառույթ-ները, ուսումնական պարապմունքների ընթացքում իրականացման եղանակները, սահմանվեցին միջառարկայական կապերի հիմնական մանկավարժական խնդիր-ները: «Միջառարկայական կապերը հանդիսանում են ժամանակակից ուսուցման գործընթացի և սովորողների ճանաչողական գործունեության զարգացման կարևոր գործոն: Ավելի բարձր մակարդակի բարձրացնելով ուսուցման ողջ գործընթացը, միջառարկայական կապերն ունեն բազմակողմանի ազդեցություն՝ ապահովելով ուսումնական գործընթացի կրթական զարգացնող և դաստիարակող գործառույթների միասնականությունը:

Աշխարհագրություն առարկայի դասավանդման իմ փորձից ելնելով ութերորդ դասարանում ուսումնասիրելով <<Տարածաշրջաններ>> ենթաթեման նպատակ ունենալով ձևավորել գիտելիքներ յուրաքանչյուր տարածաշրջանի բնական պայմանների ու ռեսուրսների, բնակչության, տնտեսության կառուցվածքի ու դրանց տեղաբաշխման աշխարհագրական օրինաչափությունների և տարածաշրջանին բնորոշ հիմնախնդիրները: Խթանել հետազոտական և մտածական հմտությունների զարգացումը:Ակնկալում եմ վերջնարդյունքում աշակերտը կկարողանա նկարագրել և վերլուծել յուրաքանչյուր տարածաշրջանի աշխարհագրական դիրքի, բնական պայմանների և ռեսուրսների առանձնահատկությունները, բնակչության որակական և քանակական բնութագրիչները, տնտեսության ճյուղային ու տարածքային կառուցվածքը: Այս թեման ուսումնասիրելիս ստեղծում եմ միջառարկայական կապ հայոց լեզու առարկայի հետ՝/Վերլուծել և ընկալել գրական հայերենի տարբեր տեքստեր, հասկանալ դրանց հիմնական գաղափարները, ունենա գրագետ բանավոր և գրավոր խոսք/:Համաշխարհային պատմության առարկայից գիտելիքներ ունենալ քաղաքական համակարգերի վերավերյալ, իմանալ Աշխարհագրական մեծ

հայտնագործությունների մասին: կենսաբանություն առարկայից գաղափար ունենալ տարբեր աշխարհամասերում տարածված կենսաբազմազանության վերաբերյալ: Հանրահաշվիվ առարկայից կարողանալ կատարել թվաբանական գործողություններ.հաշվել տոկոս,լուծել խնդիրներ: Թվային գրագիտության և համակարգչային գիտությանից ստացած գիտելիքները օգտագործել, կազմել գրաֆիկներ և կատարել հաշվարկներ:

Միջառարկայական կապերի միջոցով անցկացվող դասեր ունեցել եմ նաև իններորդ և տասներորդ դասարաններում:Օրինակ իններորդ դասարանում ուսումնասիրելով ՀՀ 'Խոշոր քաղաքներ'թեման, միջառարկայական կապեր են ստեղծվել գրականություն առարկայի հետ՝ վերհիշել ենք պատմություններ Գյումրի, Վաղարշապատ, Վանաձոր, Կապան և Հրազդան քաղաքների մասին, արտասանել բանաստեղծություններ նվիրված այս քաղաքներին:

Հայոց պատմություն առարկայից հայրենասիրական անդրադարձ է եղել քաղաքների հիմնադրմանը, մղած պայքարների և հիմնադիրների արիությանը:

Արվեստ և մշակույթ առարկաների հետ ստեղծվել են կապեր քազաքների հուշակոթողների ստեղծման, գրավչության, բացառիկ դերի վերաբերյալ:

Հայոց լեզու առարկայից պարզաբանվել են քաղաքների անվանումների ծագումնաբանությանը, պատմվել են ժողովրդական լեգենդներ քաղաքների անվանումների մասին:

Տնտեսագիտություն առարկայի շրջանակներում կատարվել են հետաքրքիր մտահաղացումներ, թե ինչպես օգտագործել այս քաղաքների պատմամշակութային կոթողները, բնության բարիքները ավելի շատ եկամուտներ ստանալու, նորարական մտքեր իրագործելու համար:Միշտ էլ հետաքրքիր է լսել ժամանակակից սերնդի մտքերը մեր հայրենիքը ծաղկեցնելու վերաբերյալ:

Բնապահպանություն առարկայի հետ կապելով դասը, իհարկե չէինք կարող չանդրադառնալ այս խոշոր քաղաքների մաքրության պահպանման, հիմնախնդիրների և քաղաք-բնակիչ գրագետ կապի պահպանմանը:

Տասներորդ դասարանում ուսումնասիրելով ջրոլորտ թեման և.ս ունեցել ենք մի շարք միջառարկայական կապեր:Մասնավորապես՝

Ֆիզիկա առարկայից աշակերտները վերհիշել են ջրի հիմնական հատկությունները՝ակուստիկ հատկությունը և մի շարք այլ զարմանահրաշ

հատկություններ, որոնք մեծ հնարավորություն տվեցին էլ ավելի խորապես ուսումնասիրել և վերլուծել ջրոլորտ թեման:

Քիմիա առարկայի հետ կապելով թեման վերհիշել ենք ջրի բաղադրությունը, կազմությունը, ինչ տարրերից է կազմված, նրա լուծիչ հատկությունը և օգտագործման պիտանելիությունը;Ելնելով այս հանգամանքից ուսումնասիրեցինք մի շարք շրջակա բնակավայրերի ջրային աղբյուրների պաշարները: Մեր հետազոտությունների արդյունքից ելնելով, եկանք այն եզրակացությանը, որ որոշ բնակավայրերի ջրային պաշարները իրենց որակական հատկանիշներով և քիմիական բաղադրությամբ չեն համապատասխանում որակական ցուցանիշին :

Կենսաբանություն առարկայի հետ կապելով վերհիշել ենք ՝ջուրը կյանք է՝ խորագիրը, որ առանց ջրի կյանք գոյություն ունենալ չի կարող, կյանքը սկիզբ է առել հենց ջրից:

Բնապահպանության տեսանկյունից նայելով միանշանակ խոսվել է մաքրության պահպանման, կենսազանգվածի բարեխիղճ օգտագործման և մարդու գործունեության ազդեցության մասին:

Մաթեմատիկա առարկայից աշակերտների ստացած գիտելիքներով հաշվարկներ ենք արել, թե որքան է համաշխարհային ջրի պաշարները, ինչպես նաև մեր հայրենիքի ջրի պաշարների քանակը: Օգտվելով ռեսուրսապահովվածության բանաձևից հաշվել ենք, թե քանի տարի կբավականացնի ջրային ռեսուրսները: Այս հաշվարկների արդյունքները հնարավորություն կտան ավելի խնայողաբար օգտագործել այն:

Աշակերտներին տրվեց առաջադրանք, թե ինչպես կարելի է խնայել ջուրը և ինչպես կարելի է քաղցրահամ ջրի պակասը լրացնել :

Եզրակացություն

Միջառարկայական համակարգված մոտեցման ներդրումը թույլ է տալիս ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերել, բարձրացնել սովորողի ինտելեկտուալ մակարդակը, ավելացնել նրա հետաքրքրությունն ուսման նկատմամբ, ընդլայնել մտահորիզոնը և զարգացնել դպրոցականների պոտենցիալ հնարավորությունները: Միջառարկայական կապերով հագեցած ինտեգրված դասեր անցկացնելիս ավելի հաջող է լուծվում տարբեր ունակություններով երեխաների ուսուցման անհատական տարբերակված մոտեցման խնդիրը:

Օրինակ, վերցնելով ընդամենը մեկ տերմին,«երկաթ», սովորողները կարող են տալ այս բառի տարատեսակ բացատրություններ,կապելով այն տարբեր բնագավառների հետ՝ քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, տնտեսագիտություն և շատ այլ ոլորտներ, որտեղ օգտագործվում է երկաթը: Ինտեգրված դասերը երեխաներին դուր է գալիս: Դրանք հետաքրքրություն են առաջացնում գիտելիքների նկատմամբ, տալիս են շատ նոր, օգտակար գիտելիքներ, պարունակում են մեծ հուզական լիցք: Այդ դասերն օգնում են բանավոր խոսքի զարգացման և բառապաշարի հարստացման կարևոր գործին, ձևավորում են գեղագիտական ճաշակ, բնության գեղեցկությունն ու հարստությունը, ստեղծագործական ներուժը հասկանալու և գնահատելու, երևույթները բազմակողմանի ընկալելու ունակություն: Միջառարկայական կապերը ուսուցման գործընթացի կազմակերպման ժամանակ ուսուցման համալիր մոտեցման և կրթության միասնականության ուժեղացման համար անհրաժեշտ պայման են: Սովորողների ուսումնական գործունեության մեջ միջառարկայական կապերի ստեղծումն ու իրականացումը ծառայում է ուսուցման գործընթացի ակտիվացման, գիտելիքների համակարգման, մտածողության ինքնուրույնության և ճանաչողական հետաքրքրության զարգացման համար որպես էական դիդակտիկ պայման:

Ուսուցումը լինելով կենդանի գործողություն անընդհատ աճում է, թարմանում, վերազինվում, հագենում նորանոր գաղափարներով ու մեթոդներով և հենց ուսուցման այս կարողություններն են, որ թույլ են տալիս հետաքրքրությունն ապահովել յուրաքանչյուր սերնդի համար՝ կախված տվյալ ժամանակաշրջանի պահանջներից, իսկ միջառարկայական կապերով անցկացված դասն ապահովում է գրեթե բոլոր սովորողների մասնակցությունը դասին, նրանց մտքի արագ աճին,

տրամաբանության զարգացմանը , իրենց ունեցած գիտելիքների օգտագործմանը և շատ այլ հմտությունների ,որոնք կարող են կիրառվել դասի ընթացքում:

Գրականության ցանկ

• Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները (ձեռնարկ ուսուցիչների համար), Ե.- 2004., էջ 42

• Иванов, В.Г. Междисциплинарные связи в образовательном процессе / В.Г. Иванов, Т.А. Иванова // Среднее профессиональное образование. – 2000. - № 12.
– С. 44 – 46

• Clegg, J. (2007). Analysing the language demands of lessons taught in a second language. Volumen Monografico, 113-128.

• Committee of European Communities (2007). 21st century schools. Brussels.

• Harris, V., & Grenfell, M. (2004). Language-learning strategies: A case for cross-curricular co Long, M. H., & Robinson, P. (1998). Focus on form: Theory, research and practice. In C. Doughty & J. Williams (Eds.), Focus on form in classsroom second language acquisition (pp. 15-41). Cambridge: Cambridge University Press. llaboration. Language Awareness, 13(2), 116- 130.

• McCarthy, J. (1997). Towards a conceptual framework for implementing a cross- curricular approach
to language awareness in the school curriculum. Language Awareness, 6(4), 208-220

• Council of Europe, 2006. Decision No. 1720/2006/EC of the European Parliament establishing an action program on lifelong learning.

• Clegg, J. (2007). Analysing the language demands of lessons taught in a second language. Volumen Monografico, 113-128.